Եկեղեցուց դուրս գալով՝ վեհափառը դիմեց դէպի առաջնորդարան, որի վերին յարկը պատրաստված է վեհափառի բնակութեան համար։ Այդ ճանապարհի վրա, երկու կողմից կանգնած էին Ներսիսեան դպրոցի և բոլոր հայոց ծխական ուսումնարանների աշակերտները և աշակերտուհիները իրանց ուսուցիչներով և վարժուհիներով։ Այդ միջոցին վանքի բաղում խռնված բազմութիւնը, մեծ մասամբ Թիւրքահայ պանդուխտներ և մշակներ, կեցցէներով ողջունեցին վեհափառին։

Առաջնորդարանի սանդուղքների վրա վեհափառը դարձաւ դէպի բազմութիւնը և օրհնելով ժողովրդին՝ դիմեց դէպի ներքին սենեակները։

Մի փոքր ժամանակից յետոյ ամենայն հայոց կաթողիկոսին սկսեցին ներկայանալ զանազան անձինք, որոնք շտապում էին շնորհաւորելու կաթողիկոսի գալուստը և աջը համբուրելու։

Նոյն օրը, Թիֆլիսի նահանգապետ իշխ. Շէրվաշիձէն և Թիֆլիսի ազնուականութեան պարագլուխ իշխ. Բագրատիօն-Մուխրանսկին պատիւ ունեցան այցելելու վեհափառ կաթողիկոսին առաջնորդարանում։

Երեկոյեան վանքի բագը լուսաւորված էր։

Երէկ, չորեքշաբթի, վեհափառ կաթողիկոսը, ժամը $1\frac{1}{2}$-ին այցելութիւն գործեց կովկասեան կառավարչապետին, ապա կառավարչապետի օգնական կոմս Տատիշչեվին և նահանգապետ իշխան Շէրվաշիձէին։

## ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Դեկտեմբերի 20-ին

Ինչպէս հեռագրով արդէն յայտնեցինք, երէկ, ամսիս 19-ին, երեկոյեան ժամը 4-ին, ամենայն հայոց կաթողիկոսը մուտ գործեց Երևան. եկեղեցական դասը զգեստաւորված դուրս էր եկել դիմաւորելու։ Վեհափառը նախ մտաւ եկեղեցի և ապա դիմեց առաջնորդարան։ Վեհափառին ուղեկցում էին Սարգիս, Ներսէս և Դաւթեան եպիսկոպոսները, Սահակ վարդապետ Ամատունի և մի երկու նորընծայ աբեղաներ։ Այսօր Էջմիածին վերադարձան առաջին երկու եպիսկոպոսները և աբեղաները։

Վեհափառը իր հետ տանելու է, Թիֆլիս, որքան կարողացանք իմանալ, Կիւրեղ եպիսկոպոսին և Սահակ վարդապետին։ Ինչպէս լսեցինք, այստեղից ճանապարհ է ընկնելու երեքշաբթի օր։ Կաթողիկոսը բոլորովին առողջ էր երևում։ Ճանապարհորդութիւնը երևի հանգիստ կանցնի, որովհետև սովորականից դուրս տաք եղանակներ են անում։

Երէկ, ամսիս 19-ին, նահանգապետը ուղևորվեց Պետերբուրգ, երկու ամիս արձակուրդ ստացած լինելով։

Մինչև այժմ Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողով չէ եղել. վարչութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ բանի վրա։

Ա.—Դ.

## ՆԱՄԱԿ ԱՂՍՏԱՖԱՅԻՑ

Դեկտեմբերի 27-ին

Երևանից դուրս գալուց յետոյ առաջին գիշերը անցկացնելով Դիլիջանում, վեհափառ կաթողիկոսը այստեղից ճանապարհ ընկաւ դէպի Աղստաֆա։ Բայց գիշերը անցկացրեց ոչ թէ Աղստաֆայում, այլ Ղազախ փոքրիկ քաղաքում։ Աղստաֆա ժամանեց երեքշաբթի առաւօտեան, մօտ ժամը 9-ին։

Կայարանի շինութեան մօտ, վեհափառին ընդունեցին Թիֆլիսից և Գանձակից եկած ներկայացուցիչները կեցցէներով։ Թիֆլիսից եկածների թւումն էր և կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդի նախագահ Ալէքսանդր Անանեան, որի նախաձեռնութեամբ և պատրաստված էր յատուկ գնացք։ Կայարանի սեղանատանը, բագուեցի դրամատէր Առաքել Ծատուրեան իր հաշւով պատրաստել էր շքեղ նախաճաշիկ։ Նախաճաշիկի ժամանակ վեհափառը առաջարկեց Նորին Մեծութեան Թագաւոր Կայսրի կենաց բաժակը։ Նախաճաշիկի վերջում վեհափառը շնորհակալութիւն յայտնեց Աղստաֆայում իրան դիմաւորողներին։

Ժամը 10-ից մի քանի րոպէ անց, վեհափառը աշխարհականների և հոգևորականների ուղեկցութեամբ, արտակարգ գնացքով մեկնեց դէպի Թիֆլիս։

Ա.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ նորերս Ալաշկերտում մի խումբ քուրդեր յարձակվել են Հին-Բայազէտի հայոց եկեղեցու վրա և կողոպտել են եկեղեցին։

—

Մեզ հեռագրում են Երևանից, դեկտեմբերի 27-ից. «Այսօր հոգեհանգիստ կատարվեց ի յիշատակ Գրիգոր Արծրունու»։

—

Ինչպէս երևում է, Թիւրքաց կառավարութիւնը ունի իր գործակալները և Թիւրքիայից դուրս։— Անկասկած այդպիսի վարձկան գործակալներից մէկն է, որ նորերս Մօսկվայից (իբրև թէ) հաղորդել է Լօնդօնի «Daily Chronicle» լրագրին, որ իբրև թէ Էջմիածնում ստացած տեղեկութիւններից երևում է, որ Սասունում և Բիթլիսում տեղի ունեցած դէպքերը այնքան էլ լուրջ բնաւորութիւն չունեն։ Հետաքրքրական է իմանալ, որտեղից իմացաւ Լօնդօնի լրագրի Մօսկվայի թղթակիցը, որ Էջմիածնում այդպիսի տեղեկութիւններ կան։ Կամ գուցէ դա հիւանդ երևակայութեան ծնունդ է։

—

Ուրախութեամբ կարդացինք մայրաքաղաքի լրագիրներում «Հիւսիսային հեռագրական գործակալութեան» հետևեալ հեռագիրը Էջմիածնից։ «Այստեղ զարմանում են օտարազգի լրագիրների հաղորդած այն լուրի վրա, թէ իբր Էջմիածնում տեղեկութիւններ են ստացված, որ Թիւրքաց Հայաստանում կատարված անցքերը չափազանցրած են։ Ընդհակառակը, այստեղ ստացված պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա, կատարված են քստմնելի և արիւնահեղ ոճիրներ քրիստոնեաների դէմ. բազմաթիւ են առանձին փաստերը մանաւանդ եկեղեցիների, եկեղեցական պաշտօնեաների և քրիստոնէական կրօնի վերաբերմամբ»։ Էջմիածնի պարտաւորութիւնն էր հերքել իր անունից տարածած սուտ լուրերը, և շատ ուրախ ենք, որ այս անգամ նա իր պարտքը կատարեց։

—

Վաղը, ուրբաթ օր, դեկտեմբերի 30-ին, Թիֆլիսի ժողովարանում նշանակված է Կարա-Մուրզայի կօնցերտը։ Խումբը բաղկացած է 50 երկու սեռի անձինքներից. մասնակցողների մեծ մասը ճեմարանի նախկին աշակերտներն են։ Լսում ենք որ կօնցերտի ծրագիրը շատ լաւ է կազմած. պրոգրամի մէջ մտնում են բաւական նոր երգեր։ Անկասկած կօնցերտը կը գրաւի մեծ հասարակութիւն։

—

Այսօր մտան մեր խմբագրատուն երեք սասունցիներ, որոնք Սասունի կոտորածից յետոյ, թողել են իրանց տունը, ընտանիքը, և եկել են դէպի Կովկասի սահմանները։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ արդէն թարգմանվում է «Սպարտակ» վէպը։

—

Այս օրերս լոյս տեսաւ «Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа» ժողովածուի տասնիններորդ հատորը, որ պարունակում է իր մէջ հետաքրքրական տեղեկութիւններ հայոց, վրաց և թիւրքաց ազգագրութիւնից։ Այդ հատորում զետեղված է մի յօդուած Ե. Մելիք-Շահնազարեանի՝ Աւետարանոց գիւղի գերեզմանատան մասին։ Նա արտանկարել է գերեզմանաքարերից նկարներ, որոնցից երևում է, որ այդ քարերի տակ թաղվածները արքայազուններ են։ Խորհուրդ ենք տալիս այն անձանց, որոնք պեղումներով են զբաղված, ուշք դարձնել այդ գերեզմանատան վրա։ Մեր կողմից կարող ենք աւելացնել, որ այդ տեսակ գերեզմաններին հանդիպել ենք Աւետարանոցի մօտ եղած գիւղերում, օրինակ Շօշ գիւղում։—Ժողովածուի մէջ կան նոյնպէս մի քանի հայկական հեքիաթներ հետաքրքրական յօրինուածքով։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ հաղորդում են հետևեալը. «Ամսիս 19 ին, Ռօտշիլդի գործարանի բանւորների մի մասը, մօտ 120 հոգի, մի խնդիրքով դիմեցին ոստիկանապետին, որի մէջ մանրամասն նկարագրել էին իրանց դրութիւնը։ Մի կողմը թողած գործարանում քաշած իրանց անտանելի նեղութիւնները, տուգանքի ենթարկելն էլ չափ ու սահմանից անցել է, այնպէս որ թէպէտ օրական նշանակված է բանւորներին 70 կոպէկից մինչև 1 ր. 20 կ. վարձ, բայց այնքան յաճախ են տուգանքի ենթարկում, որ հազիւ են 30—40 կոպէկ ստանում։ Հիմնվելով այդ բանի վրա, բանւորները խոնարհաբար խնդրում էին ոստիկանապետից, որ նա միջամտի, որպէս զի իրանց արձակեն գործարանից, որովհետև իրանք դիմել էին գործարանի գլխաւոր վարչութեան, բայց վարչութիւնը մերժել էր նրանց արձակել։ Ոստիկանապետը խնդրեց որ շարունակեն հանգիստ մնալ, մինչև որ ինքը անմիջապէս կը դիմի գործարանի վարչութեան և բաւարարութիւն կը պահանջի բանւորների արդարացի պահանջի համար»։

—

ԶԱՆԳԵԶՈՒՐ գաւառի Խնձօրէսկ գիւղի բնակիչները, կամենալով իրանց դպրոցի համար «Մշակ» ստանալ, դիմել են հետևեալ միջոցին.—տաս գիւղացիներ միացած՝ իրանց մէջ հանգանակել են 10 րուբլի, և այդ փողով նուիրել «Մշակի» մի օրինակ իրանց գիւղի դպրոցին։ Լաւ կը լինէր, որ այդ փոքրիկ գիւղից օրինակ վերցնէին այն բազմաթիւ մեծ գիւղերը և նոյն իսկ գաւառական քաղաքները, որոնք անդադար դիմում են մեզ խնդրելով մի օրինակ ձրի «Մշակ» ուղարկել իրանց…

—

ԴԶԼԱՐԻՑ, Յովհաննէս Ելզարեանց նուիրեց «Մշակի» 1895 թւի մի օրինակ այդ քաղաքի հայոց օրիորդական դպրոցին։

—

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են. «Տգէտ քահանաների ձեռնադրութեան սովորութիւնը իր ազդեցութիւնը սկսել է ունենալ և մեր կողմերում. սունկի նման բուսնում են տգէտ տիրացուներ և համախոսականները ձեռքերին ման են ածում խանութից խանութ, տնից տուն ստորագրութիւններ հաւաքելու։ Այս օրերս երևաց այստեղ մէկ այդպիսի տիրացու, որը իր ընկերների միջոցով սկսել է ստորագրութիւններ հաւաքել. շուտով կը լրացնի նա համախոսական թերթը և կուղևորվի դէպի Էջմիածին»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ղարաբաղի նման հայ գիւղերով լի թեմը ունի միայն... 20 ծխական դպրոց։ Այդ նրանից է, որ թեմական տեսուչ նշանակված է մի անընդունակ մարդ։ Անհրաժեշտ է նշանակել մի եռանդուն և բանիմաց տեսուչ։ Ժամանակ է, վերջապէս, ուշադրութիւն դարձնել այս ընդարձակ թեմի տգիտութեան մէջ խարխափող ժողովրդի վրա»։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են դեկտեմբերի 25-ից. «Այսօր, ս. Աստուածածին եկեղեցում, պատարագից յետոյ, խուռն բազմութեան ներկայութեամբ, հոգեհանգիստ կատարվեց Գրիգոր Արծրունու յիշատակին, նրա մահվան երկրորդ տարեդարձի առիթով»։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Սրանից մի քանի օր առաջ տեղական վաճառականները հաւաքվելով, պրիստաւի նախագահութեամբ, ընտրեցին դեպուտատներ։ Ընտրվեցին երեք դեպուտատ և երեք անձնափոխանորդներ։ Դեպուտատները շատ բան ունեն անելու, բայց թէ արդեօք կարող կը լինեն գործ կատարել թէ ոչ,—այդ ապագան ցոյց կը տայ»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Ամսիս 18-ին դերասան Զարչօղլեանը, սիրողների մասնակցութեամբ, քաղաքային կլուբի դահլիճում խաղաց «Մեծապատիւ Մուրացկանները»։ Ընդհանրապէս դերակատարները բարեխիղճ կերպով կատարեցին իրանց դերերը, մանաւանդ տ. Զարչօղլեանը Շուշանի դերում և պ. Զարչօղլեանը՝ Աբիսօղոմ աղայի դերում։ Զարչօղլեան եղել է Թիֆլիսի թատրօնական խմբի մէջ և բաւական զարգացրել է դերասանական արուեստում իր ընդունակութիւնները։ Այդ երեկոյ նա բաւական աջող կերպով ներկայացրեց տաղանդաւոր Պարոնեանի ստեղծած ապուշ հարուստի տիպը։ Ներկայացմանը բաւական հասարակութիւն կար»։

—

ՄԵՐՎԻՑ, մի պարոն, Աղ. Բէկլուբէգեանց խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Յուլիս ամսին, Ասխաբադի քահանայ Փանեանց, Մերվում, յօգուտ Թիւրքահայ գաղթական սովեալների, ժողովեց մի համեստ գումար, որ պէտք է ուղարկէր Բարեգործական ընկերութեան մի որ և է ճիւղին ի գործադրութիւն։ Սակայն այդ օրից անցել է մօտ 5 ամիս, և այդ մասին ոչ մի ծանուցումն չէ եղել յիշեալ քահանայի կողմից։ Արդեօք ժողոված գումարը գործադրվե՞լ է իր նպատակին թէ ոչ, այդ մասին հրապարակաւ ոչինչ չէ յայտնված, մինչդեռ այդ անհրաժեշտ է, որպէս զի զանազան թիւրիմացութիւնների առիթներ չը լինեն։ Այդ պատճառով նուիրատուներից շատերը, որոնց թւում և մենք, ցանկանում ենք իմանալ, արդեօք սովեալներին պատկանեալ գումարը գործադրվել է իր նպատակին, թէ ոչ։ Եթէ գործադրվել է, կը ցանկանայինք, որ տէր հայրը հրապարակաւ յայտնէր ի գիտութիւն հասարակութեան։ Իսկ եթէ ոչ, կարծում ենք որ ժամանակ է»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Տաճկահայ թշուառ գաղթականների ծայրը հասել է Շուշի։ Գաղթականների մէջ կայ մի քահանայ»։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՍԻՍԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

—

«Հայրենիք» լրագրին Հալէպից գրում են հետևեալը.

«Հանգուցեալ կաթողիկոսը արդէն բաւական տարիներէ ի վեր առանց ծանր հիւանդութեան ձմեռ մը չէր անցըներ։ Այս տարի երբ յունիս 2-ին Հալէպ եկաւ, այն ատենէն կարծես մահուան ստուերը կը թեւածէր դէմքին վրա։ Նոյեմբերին մարմնին ձախ կողմէն կաթուած իջաւ։ Նոյեմբեր 11-ին երկրորդ կաթուած մը իջաւ լեզուին, արգիլելով իրեն խօսիլ. անկէ յետոյ կիսամեռ և անգիտակից անցան իր ժամերը, կարծես սպասելով մահուան, որ չուշացաւ գալու նոյեմբեր 15 երեքշաբթի իրիկուն ժամը $2\frac{1}{2}$-ին։ Եօթանասունը չորս տարեկան էր։

Հոգեվարքին ատեն մեծ բազմութիւն հաւաքված էր բնակարանին շուրջը։ Մահուան լուրը տեղական կառավարութեան հաղորդուելով, հանգուցելոյն մարմինը փոխադրուեցաւ քաղաքիս հայոց եկեղեցիին գաւթին մէջ իբր մատուռ կառուցուած Ս. Աստուածածնայ եկեղեցին։ Անդին, հանգուցելոյն սենեակը կնքոյ տակ կառնուէր, հարկ եղած օրինական գործողութիւնները կատարուելով։ Մահուան լուրը հեռագրով հաղորդուեց Պատրիարքարան, Երուսաղէմ և ուրիշ մէկ քանի կարեւոր տեղեր։

«Յաջորդ օրը, չորեքշաբթի, Հալէպի փոքրաթիւ հայ հասարակութիւնը կատարեց յուղարկաւորութիւնը։ Իրիկուան ժամը $11\frac{1}{2}$-ին հանգուցեալ կաթողիկոսին մարմինը ամփոփուեցաւ Սրբոց Քառասնից Մանկանց մատրան մէջ, որ եկեղեցիին իբր աւանդատուն կը ծառայէ։ Օծումը կատարեց իր մօտ գտնուող Տ. Խորէն վարդապետ Գիմաքսեան։ Հանդէսին ներկայ էին տեղական կառավարութեան կողմէ պաշտօնական մարմիններ, կուսակալին թարգմանը, օտար ազգերու հիւպատոսները իրենց թարգմաններով, և այլն»։

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, դեկտեմբերի 18-ին

Ուրբաթ օր ազգային կենտրոնական վարչութեան նիստն էր։ Ժողովը բացվեց նախագահութեամբ տեղապահ Գիմաքսեանի և ատենապետութեամբ Նորատունկեանի։ Ներկայ էին 60 ժողովականներ։ Գիմաքսեան ատենաբանութիւն մը ընելով, ի միջի այլոց ըսաւ. «Ժողովը այսօր իսկ աջակից ժողովներ պիտի ընտրէ ձեր համբաւշէն քուէովը ընտրուած Մատթէոս Պատրիարքին շուրջը, միշտ նոյն իմաստուն և խոհեմ ոգիով։ Միայն պիտի խնդրեմ դարձեալ ժողովէդ որ, այս անգամ ալ, չի տայ ինծի իր քուէն՝ Կրօնական ժողովին անդամակցութեան համար։ Ես գիտեմ որ ինծի պէս խեղճ եկեղեցականի մը ընտրութիւնը չի կրնար նշանակութիւն մը ունենալ ձեր առջև, բայց նորէն եթէ փափաքողներ կան ընտրութեանս, կը խնդրեմ անոնցմէ իրենց քուէն չը տալ իմ անուանս»։

Նախ ձեռնարկվեց Կրօնական ժողովի ընտրութեան։ Ատենադպիրը, էֆ. Մոստիչեան, կարդաց Համագումար ժողովին տեղեկագիրը Կրօնական ժողովին ընտրելիներուն մասին։

Այդ ընտրութիւնից յետոյ սկսվեց քուէարկութիւնը, և ձայների առաւելութեամբ Կրօնական

